

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԺԱՆՆԱ



2

Ժաննա Ավետիսյան

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

# 2





## **Ավետիսյան Ժաննա**

Տեխնոլոգիա (2-րդ դասարանի դասագիրք) / Ժ. Ավետիսյան. Եր.:  
Էդիթ Պրինտ, 2023.-112 էջ:

© Ժ. Ավետիսյան, 2023

© Էդիթ Պրինտ, 2023

2-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի դասանյութի նպատակը աշխատանքի նկատմամբ սեր և հարգալից վերաբերմունք դաստիարակելն է, նրանց պարզագույն տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներ մատուցելը: Դասագիրքը սովորեցնում է թղթից, բնական նյութերից մատչելի և գեղեցիկ նմուշներ պատրաստելու հնարները, ձևավորում և զարգացնում է գծելու, կտրելու, սոսնձելու կարողություններ, ստեղծագործելու մտածողություն, համեմատելու, դիտարկելու, քննարկելու, գնահատելու, նոր և հետաքրքիր որոշումներ կայացնելու հմտություններ:

2-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը ներառում է՝

- դասագիրք
- մեթոդական ուղեցույց
- աշխատանքային ալբոմ
- տեսադասեր:

Ուսումնական փաթեթը կազմված է չափորոշային և ծրագրային պահանջներին համապատասխան:

## Հարգելի՛ բարեկամ

Դու արդեն շատ բան ես սովորել առաջին դասարանում: Այս տարի դու կշարունակես ուսումնասիրել գեղարվեստական ապլիկացիայի, խճանկարի, օրիգամիի, համաչափ ծալումներով կտրվածքների, մոդելների պատրաստման տեխնիկաները, ինչպես նաև գծագրերով և գծապատկերներով աշխատելու ձևերը: Դասագրքի յուրաքանչյուր առաջադրանք կատարելիս կանես նոր բացահայտումներ, կփնտրես և կգտնես դրանց լուծումները: Պատրաստած նմուշները կկիրառես դերային խաղերում, սեղանի թատրոնի ներկայացման մեջ, կառաջադրես մաթեմատիկական խնդիրներ, կհորինես հանելուկներ, հետաքրքրաշարժ հեքիաթներ, պատմվածքներ, կխաղաս ինտերակտիվ խաղեր: «Ձեռնարկատիրություն» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» ծրագրային բաժիններում կաշխատես ապլիկացիայի և խճանկարի տեխնիկաներով, իսկ «Կենցաղ և ընտանիք», «Առողջ սնունդ, սննդի պատրաստում» բաժիններին հատկացված դասաժամերին ուսուցիչը կկազմակերպի զրույց-քննարկումներ դասագրքում տրված նկարների շուրջ: Կձևավորես փոքր խմբեր համադասարանցիների հետ, կքննարկես, համեմատություններ, մեկնաբանություններ, վերլուծություններ կանես տարբեր իրավիճակների վերաբերյալ, կօգտվես առաջադրված բառերից, եզրույթներից, ապա կներկայացնես ձեր խմբի կարծիքը տրված նկարների շուրջ:

Հիշիր, այն, ինչ իմացար, ինչ սովորեցիր, կարող ես սովորեցնել ընկերներիդ և ծնողներիդ՝ օգնելով նրանց՝ տանը պատրաստելու նույնօրինակ նմուշներ:

## Պայմանական նշաններն են՝



Տեսադասեր



Ոտանավոր, հանելուկ, զրույց



Հարցեր



Առաջադրանքի կատարման հաջորդականություն



Հրահանգ, ցուցում, հիշեցում, առաջադրանք



Նոր բառեր, բառակապակցություններ





Խմբային աշխատանք



# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

## Նպատակ

Այս բաժնում դու կճանախանաս նյութերի տեսակներին, հատկություններին, կտվորես մշակման համար նախատեսված պարզ գործիքներով, միջոցներով և սարքավորումներով աշխատելու ձևերը, եղանակները, հնարները՝ պահպանելով անվտանգության կանոնները:



1. Դաս՝ «Ի՛նչ գիտես դու արդեն»
2. Դաս՝ «Աշխատատեղի նախապատրաստում»
3. Դաս՝ «Գծանշում»
4. Դաս՝ «Կտրում»
5. Դաս՝ «Սոսնձում»



### Վերջնարդյունք

Այս բաժնի ավարտին դու կճանաչես նյութերի տեսակները, հատկությունները, մշակման համար նախատեսված պարզ գործիքները, միջոցներն ու սարքավորումները, կիմանաս աշխատելու ձևերը, եղանակները, հնարները, կկարողանաս նախապատրաստել աշխատատեղը, գծանշել, կտրել, սոսնձել՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Դաս 1.

Ի՞նչ գիտես դու արդեն

Քննարկենք միասին.


Նայիր նկարներին:

Առանձնացրո՛ւ առարկաները՝ բաժանելով երկու խմբի՝

1. աշխատանքային նյութեր,
2. աշխատանքային միջոցներ:



Ներկայացրո՛ւ նկարներում պատկերված գործողությունները:



Անվանի՛ր աշխատանքի տեսակը:





## Դաս 2.

# Աշխատատեղի նախապատրաստում

Աշխատանքային սեղանի կահավորում



Յուրաքանչյուր դասից առաջ նախապատրաստի՛ր  
աշխատասեղանը:

- Աշխատասեղանին դի՛ր աշխատանքի համար անհրաժեշտ միջոցները, պարագաները:
- Աշխատանքային միջոցներից օգտվի՛ր կոկիկ:
- Աշխատանքի ավարտից հետո աշխատանքային միջոցներն ու պարագաները դի՛ր դասասենյակի համապատասխան դարակաշարում:
- Աշխատասեղանը մաքրի՛ր չոր կամ խոնավ լաթով:



Աջլիկների համար աշխատասեղանին լույսը պետք է ընկնի ձախ կողմից:



Ձախլիկների համար աշխատասեղանին լույսը պետք է ընկնի աջ կողմից:



### Դաս 3.

## Գծանշում


Մատիտը աշխատանքային միջոց է:  
Մատիտի տեսակներն են՝ միագույն և բազմագույն:



- Ապլիկացիայի դետալները եզրագծի՞ր մատիտով:
- Գծանշումները կատարի՞ր քանոնով, երկրաչափական պատկերներով, ձևանմուշով:
- Մատիտով եզրագծի՞ր կոկիկ:
- Մատիտը օգտագործելուց հետո դի՞ր սեղանի աջ կողմում:



նկ.1



նկ.2


1. Ձախլիկ, նկարի՞ր՝ թուղթը դիրքով թեք դրված (նկ. 1):
2. Աջլիկ, նկարի՞ր՝ թուղթը դիրքով ուղիղ դրված (նկ. 2):




- գծանշել
- եզրագիծ

- ձևանմուշ


**Կատարիր եզրագծման վարժություններ:**




Գծի՛ր ուղիղ գիծ քանոնի օգնությամբ:



Եզրագծի՛ր շրջան, եռանկյուն ձևանմուշով:



Եզրագծի՛ր ձվաձև, քառակուսի ձևանմուշով:



Եզրագծի՛ր երկտակ ծավլած թղթի վրա ձևանմուշով:



## Դաս 4.

## Կտրում

Մկրատը աշխատանքային գործիք է:  
Մկրատի տեսակներն են՝



Պահպանիր մկրատով աշխատելու անվտանգության կանոնները:

➔ Մկրատը փակ վիճակում դիր սեղանին:

- Կտրելուց հետո մկրատը փակ վիճակում դիր սեղանի աջ կողմում:
- Աշխատանքի ավարտից հետո մկրատը պահիր տուփի մեջ:




1. Ձախլիկ, ձախ ձեռքով մկրատը փոխանցիր փակ վիճակում, «օղակն առաջ» դիրքով (նկ. 1):
2. Աջլիկ, աջ ձեռքով մկրատը փոխանցիր փակ վիճակում, «օղակն առաջ» դիրքով (նկ. 2):



նկ.1




նկ.2




- կտրահանել
- ծալագիծ
- կտրվածք

## Թղթի կտրման տեխնիկաները Կատարի՞ր կտրման վարժություններ

➔ Եղի՞ր ուշադիր և զգույշ:




Կտրի՞ր՝ 1. ծալագիծը, 2. գծանշված գիծը, 3. թղթի կենտրոնից:




4. Կտրահանի՞ր քառակուսին:

5. Կտրվածք արա:



6. Կտրահանի՞ր ուղղանկյունը:

7. Կտրահանի՞ր շրջանը:




8. Կտրահանի՞ր եռանկյունը: 10. Կտրահանի՞ր ձվաձևը:

## Դաս 5.

# Մոսնձում



Մոսինձը աշխատանքային միջոց է: Մոսնձի տեսակներն են՝ մածուցիկ և չոր:



Մոսնձելիս պահպանիր սանիտարահիգիենիկ կանոնները:



- Աշխատիր կոկիկ:
- Մոսնձիր միայն սոսնձվող դետալը:
- Մոսինձն օգտագործելուց հետո դիր սեղանի աջ կողմում՝ փակ վիճակում:
- Մոսնձով աշխատելու ընթացքում օգտագործիր փորձաթուղթ:
- Աշխատանքի ավարտից հետո մոսինձը դիր պահարանում փակ վիճակում:
- Ապրիկացիայի դետալները սոսնձիր սոսինձ մատիտով կամ վրձնով:



- սոսնձել
- սոսնձապարել

## Կատարիր սոսնձման վարժություններ

Հիշիր՝ այսպես են սոսնձում ապլիկացիայի դետալները:



Սոսնձելու համար օգտագործիր երեք փորձաթուղթ:




Առաջին փորձաթղթի վրա դիր ապլիկացիայի դետալը և սոսնձապատիր հակառակ կողմից:

Երկրորդ փորձաթղթի վրա դիր ապլիկացիայի սոսնձված դետալը՝ ավելորդ սոսինձը հեռացնելու համար:



Երրորդ փորձաթուղթը դիր ապլիկացիայի սոսնձված դետալի վրա՝ համապատասխան տեղում, և թույլ սեղմիր:



Փորձաթուղթը զգուշորեն վերցրո՛ւ սոսնձվող դետալի վրայից:

Ապլիկացիայի դետալները կարելի է սոսնձել նաև վրձնով:



ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ

# ԽՃԱՆԿԱՐ

## Նպատակ

Այս բաժնում դու կճանոթանաս թղթի և ստվարաթղթի տեսակներին, հատկություններին, կտվորես թղթի մշակման եղանակները՝ պատռման, ճմռման, և կտիրապետես գեղարվեստական խճանկարի պատրաստման տեխնիկային:



**Խճանկարը** ոչ մեծ մասնիկներից հավաքած նկար է, նախշ: Խճանկար կարելի է պատրաստել կանոնավոր և անկանոն փայտի, ապակու, թղթի և այլ նյութերի մանր մասնիկներից:



### ***Թղթի պատրման և ճմոթման տեխնիկա***

1. Դաս՝ «Տատիկի նկուղում»
2. Դաս՝ «Պարուհիներ»
3. Դաս՝ «Երկարավիզ ընձուղտ»
4. Դաս՝ «Ծաղիկները սարերում»
5. Դաս՝ «Դեկորատիվ գրչաման»
6. Դաս՝ «Ոսկե ձկնիկ»

### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու արդեն կիմանաս թղթի և սովարաթղթի մշակման ձևերը, հնարները, կկարողանաս թղթի պատման և ճմոթման տեխնիկայով պատրաստել գեղարվեստական խճանկար:



Դաս 1.

Խճանկար «Տատիկի նկուղում»




Աշխատասեր տատիկը  
Կաթը լցրեց կճուճը,  
Շտապ տարավ նկուղը:  
Փխոն տեսավ, զայրացավ.  
– Տատիկը ինձ մոռացավ:  
Պոչով կճուճին զարկեց,  
Կճուճն ընկավ կտորվեց,  
Նանեն իսկույն հավաքեց:



1. Ինչի՞ համար են կճուճները:
2. Ինչո՞ւ են կճուճները բազմագույն:

**Եկե՛ք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝




Վերականգնված թուղթ




Վերականգնված թուղթ

↓  
**Աշխատանքի կատարման հաջորդականությունը.**

1. Գունավոր թղթերը պատատոտելով՝ ստացիր մանր մասնիկներ:



2. Մտանձիր թղթե մասնիկները էսքիզի ներսում: Պահպանիր էսքիզի եզրագծերը:



3. Օգտագործիր փորձաթուղթ:



➔ Կարող ես պատրաստել խճանկար՝ սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 2.

Խճանկար «Պարուհիներ»



Պատռտեցի թուղթը մեծ  
Եվ ստացա շատ թղթեր:  
Դե, հիմա էլ եկեք մենք  
Խճանկար պատրաստենք:  
Սոսինձ, վրձին շուտ բերեք,  
Խճանկարն ավարտենք:



1. Ովքեր են նկարում պատկերված:
2. Ինչ գույներ ունեն:

**Եկեք պատրաստենք պարուհիների բազմագույն հագուստը:**


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Գունավոր թղթերը պատառոտելով կամ ձնոթելով ստացիր մանր մասնիկներ:



2. Մտանձիր թղթե մասնիկները էսքիզի ներսում:




➡ Պահպանիր էսքիզի եզրագծերը: Օգտագործիր փորձաթուղթ: Կարող ես պատրաստել խճանկար՝ սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրեք, համեմատեք և քննարկեք:

Դաս 3.

Խճանկար «Ընձուղտ»




Ոտքից գլուխ  
Պուտպուտիկ,  
Կճղակավոր ու բարալիկ,  
Վիզը երկար, հեռատես,  
Աշտարակ լինի կարծես:



1. Ինչո՞ւ է հեռատես ընձուղտը:
2. Ի՞նչ է կարողանում անել ընձուղտը երկար վզի շնորհիվ:

**Եկե՛ք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝






**Աշխատանքի կատարման հաջորդականությունը**

1. Գունավոր թղթերը պատառոտելով ստացիր մանր մասնիկներ:



2. Մտանձիր թղթե մասնիկները էսքիզի ներսում: Պահպանիր էսքիզի եզրագծերը:



3. Օգտագործիր փորձաթուղթ:

➔ Կարող ես պատրաստել խճանկար՝ սեփական մտահղացմամբ:



- պուրպուրիկ
- բարակիկ
- կճղակավոր
- հեռապետ



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:



Դաս 4.

Խճանկար «Ծաղիկները սարերում»



Ծաղիկներ ենք մենք սիրուն,  
Ծաղիկներ ենք բազմագույն,  
Դե, շուտ եկե՛ք, մեզ տարե՛ք:  
Ծաղկամանում տեղադրե՛ք:



1. Ինչպիսի՞ երկրաչափական ձև ունեն ծաղկաթերթիկները:
2. Արդյոք ճանաչած թղթիկներով ծաղիկները գեղեցիկ են:

**Եկե՛ք պատրաստենք:**


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Գունավոր անձեռոցիկի թղթերը պատառոտելով՝ ստացիր մանր մասնիկներ, ձնոթի՛ր՝ ստանալով փոքրիկ գնդիկներ, ինչպես նկարում:



2. Մտնձիր թղթ մասնիկները և անրացրո՛ւ ծաղկաթերթիկի էսքիզի ներսում: Օգտագործիր փորձաթուղթ:



3. Ծաղկաթերթիկները կարող են լինել միագույն, երկգույն, բազմագույն:



- միագույն
- բազմագույն
- երկգույն
- ծաղկաթերթիկ



Կարող ես պատրաստել խճանկար՝ սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 5.

Խճանկար «Ոսկե ձկնիկ»



Ձկնիկները ոսկեգույն,  
Թեփուկները բազմագույն,  
Հանգիստ լողում են ջրում,  
Ուրախ վերուվար անում:



1. Ինչպիսին են մեր ձկնիկները:
2. Ինչո՞ւ են ձկնիկների թեփուկները բազմագույն:

**Եկե՛ք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝



Վրձու՛մ վրձու՛մ

Վրձու՛մը




## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Գունավոր թղթերից դակիչի օգնությամբ ստացիր շատ ու շատ շրջանիկներ:



2. Ստանձապատիր ձկնիկի էսքիզը, ապա գունավոր թղթե շրջանիկները լցրո՛ւ ստանձապատված մակերեսի վրա: «Ձկնիկ» խճանկարի համար կարող ես օգտագործել միագույն կամ բազմագույն շրջանիկները:



3. Պահպանիր էսքիզի եզրագծերը: Օգտագործիր փորձաթուղթը:



- ➔ Կարող ես պատրաստել խճանկար՝ սեփական մտահղացմամբ, նաև՝ պատառոտված թղթիկներով:




Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ ԱՊԼԻԿԱՑԻԱ

## Նպատակ


Այս բաժնում դու կշարունակես ծանոթանալ թղթի և սովարաթղթի հատկություններին, կսովորես երկրաչափական պատկերներ կտրելու ձևերը և կտիրապետես գեղարվեստական ապլիկացիայի պատրաստման տեխնիկային:



**Ապլիկացիա** նշանակում է դրվագել, ներդրվագել: Այն որոշակի մեծության մասնիկներով պատկերի ստացումն է ստանձման տեխնիկայով:

### ***Թղթի կտրման տեխնիկա***

1. Դաս՝ «Նավակ»
2. Դաս՝ «Ռոբոտ»
3. Դաս՝ «Բազմագույն ցանկապատ»
4. Դաս՝ «Դաշնակահար»
5. Դաս՝ «Նապաստակ»
6. Դաս՝ «Լուսակիր»
7. Դաս՝ «Անակնկալ բացիկ»




### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կիմանաս երկրաչափական պատկերներ կտրելու ձևերը և կսովորես գեղարվեստական ապլիկացիայի պատրաստման տեխնիկան:

Դաս 1.

## Ապլիկացիա «Նավակ»




Եռանկյունն եմ, եռանկյունը,  
Ունեմ երեք իմ անկյունը,  
Երեք կողմ, երեք գագաթ,  
Եռանկյունն եմ միշտ հպարտ:



1. Ո՞ր երկրաչափական ձևն է, որ ունի երեք կողմ, երեք անկյուն:
2. Քանի՞ եռանկյուն է օգտագործված մեկ նավակի համար:
3. Ինչո՞ւ են նրանք եռանկյունաձև:

### Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝




«Նավակի փամփուր»

«Նավակի փամփուր»




## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Կտրահանիր տարբեր գույնի երեք մեծ, երկու փոքր, մեկ միջին չափի եռանկյուններ:



2. Մոսնձիր թղթե մակերեսի վրա՝ էսքիզին համապատասխան. սկզբում՝ մեծ դետալները, հետո՝ փոքրերը: Օգտագործիր փորձաթուղթ:



1. Մեկ նավակի համար քանի՞ փոքր եռանկյուն է անհրաժեշտ:
2. Քանի՞ մեծ եռանկյուն է անհրաժեշտ երկու նավակի համար:



Պատրաստիր հարթ ապլիկացիա սեփական մտահղացմամբ:




Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:



Դաս 2.

# Ապլիկացիա «Ռոբոտ»



Ունեն կողմեր բավարար,  
Ունեն կողմեր հավասար:  
Ունեն չորս կողմ, չորս անկյուն,  
Չորսն էլ միշտ ուղիղ անկյուն:



1. Ինչպիսի՞ երկրաչափական ձև է օգտագործված:
2. Քանի՞ քառակուսի է անհրաժեշտ երեք ռոբոտ պատրաստելու համար:


## Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝




«Մտածելու քարտ»


«Մտածելու քարտ»


**Աշխատանքի կատարման հաջորդականությունը**

1. Ըստ տրված նկարի՝ կտրահանիր քառակուսիներ:



2. Ստանձիր կտրած դետալները՝ էսքիզին համապատասխան: Սկզբում ստանձիր մեծ դետալները, աստիճանաբար՝ փոքրերը: Օգտագործիր փորձաթուղթ:



- 1. Քանի քառակուսի է օգտագործված մեկ ռոբոտի համար:
- 2. Ինչպե՞ս է բարևում ռոբոտը:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 3.


## Ապրիկացիա «Բազմագույն ցանկապատ»



Ցանկապատը մեր բակի  
Թե ուզում ես՝ դու հաշվի՛:  
Երկու կարմիր, երկու սև,  
Կպատրաստեն հիմա, տեն:



1. Ինչպիսի՞ երկրաչափական ձև ունի ցանկապատը:
2. Քանի՞ անկյուն ունի բազմանկյունը:



### Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝




Վրտակարգում

Վրտակարգում




## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Բազմանկյունաձև պատկերները կարող են լինել նաև այսպիսին: Կտրահանիր բազմանկյուններ՝ մեծ, փոքր, լայն, նեղ:



2. Բազմանկյունաձև մասնիկներից պատկերի ծաղիկ, ցանկապատ:



1. Ինչպիսին են բազմանկյունները:
2. Քանի բազմանկյուն է օգտագործված ծաղիկի համար:




Պատրաստիր ապլիկացիա սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրեք, համեմատեք և քննարկեք:

Դաս 4.

# Ապրիկացիա «Դաշնակահար»




Նվագում են և երգում  
Մեր արվեստի դպրոցում:  
Դո, մի, սոլ, սի, ռե, ֆա, լյա,  
Ես երգում են յոթ նոտա:



1. Ինչպիսի՞ երկրաչափական ձև ունեն ստեղները:
2. Արդյո՞ք սև ստեղնաշարերը հավասարաչանփ են:

## Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝



Վրժարական


Վրժարական

↓  
Աշխատանքի կատարման  
հաջորդականությունը

1. Կտրիր սև գույնի հինգ ժապավենաձև թղթե ուղղանկյուններ:



2. Մտնձիր սև ստեղնաշարերը՝ ինչպես նկարում: Օգտագործիր փորձաթուղթ:



- 1. Բանի՞ սև ստեղնաշար օգտագործեցինք:
- 2. Բանի՞ նոտա ես երգեցի:

➔ Պատրաստիր դաշնամուրի ստեղնաշարը քո նախընտրած գույնով:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 5.

# Ապրիլացիա «Նապաստակներ»



Նապաստակն են ես սիրուն,  
Միշտ գազարով են շրջում:  
Թե որ կուզես՝ ես կտամ,  
Միայն չասես, որ գնամ:



1. Ինչպիսի՞ երկրաչափական ձև է օգտագործված:
2. Արդյոք միայն ձվաձև երկրաչափական ձևն է օգտագործված:

## Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝



Վերջին փորձ




Վերջին փորձ




## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Գծանշի՜ր և կտրահանի՜ր տարբեր չափի ձվաձև մասնիկներ:



2. Ստանձի՜ր նշված թվերի հաջորդականությամբ՝ էսքիզին համապատասխան: Օգտագործի՜ր փորձաթուղթ:



- 1. Ի՞նչ է մտածում նապաստակը բացատրում:
- 2. Քանի՞ ձվաձև է անհրաժեշտ նապաստակ պատրաստելու համար:

➔ Պատրաստի՜ր ապլիկացիա սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:




Դաս 6.

## Ապրիկացիա «Լուսակիր»



Լուսակիրը քեզ ասում է.

- Փոքրիկ, կանգնիր, կարմիր լույս է:
- Քիչ էլ սպասիր, դեղին լույս է:
- Հիմա անցիր, կանաչ լույս է:



1. Ինչ գույներ ունի լուսակիրը:
2. Ինչպիսի երկրաչափական ձև է օգտագործված:
3. Քանի շրջան է անհրաժեշտ երկու լուսակիր պատրաստելու համար:


**Եկեք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝




↓  
Աշխատանքի կատարման  
հաջորդականությունը

1. Գծանշիր ձևանմուշով և կտրահանիր ուղղանկյունը, եռանկյունը և երեք գույնի շրջանիկները:



2. Մտնձիր տրված նկարի հաջորդականությամբ:



3. Օգտագործիր փորձաթուղթ: Լուսակիրը արդեն պատրաստ է:

- 1. Ո՞ր գույներն են հուշում **«Կանգնիր»**, **«Սպասիր»**, **«Անցիր»**:
- 2. Հնարավոր է, արդյոք, թղթե անձեռոցիկից կտրահանել շրջան:

➡ Համեմատիր քո և ընկերոջդ կատարած ապլիկացիաները:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրեք, համեմատեք և քննարկեք:

Դաս 7.

# Մոդուլային ապլիկացիա «Անակնկալ բացիկ»



Երկարականջ նապաստակը  
Ծառերի տակ, թփերի տակ  
Թաքնվում է ցատկոտելով:  
Բայց դե ուր էլ որ թաքնվի՝  
Ականջները չի թաքցնի:



1. Ինչո՞ւ է բացիկը կոչվում անակնկալ:
2. Աշխատանքային ի՞նչ միջոցներ են օգտագործվել:

### Եկե՛ք պատրաստենք:


Մեզ անհրաժեշտ է՝





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Ուղղանկյուն թուղթը ծալիր երկտակ: Գծանշիր քանոնով ուղղանկյունաձև պատկեր՝ ինչպես նկարում: Նշիր կտրման և ծալման գծերը:
2. Կտրիր կտրման գծերով, ապա ծալիր ծալման գծերով ետ-առաջ, հարթեցրո՛ւ: Օգտագործիր հարթիչ:



3. Գծանշի՛ր և կտրահանի՛ր նապաստակը, խոտերը: Ստանձի՛ր ինչպես նկարում: Ստացի՛ր բնապատկեր ապլիկացիայի տեխնիկայով:



4. Բացիկի հակառակ կողմում ստանձի՛ր նույն չափի ուղղանկյունաձև կանաչ թուղթ: Ստանձապատի՛ր միայն կանաչ մակերեսը՝ ինչպես նկարում, և տեղադրի՛ր բնապատկերը, հարթեցրո՛ւ, որպեսզի ստանձվի:



➔ Պատրաստի՛ր բացիկ սեփական մտահղացմամբ:



Բնապատկերը կարող ես նկարել գունավոր մատիտներով և լրացնել օժանդակ դետալներով:

ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ


# ՕՐԻԳԱՄԻ

## Նպատակ

Այս բաժնում դու կշարունակես ծանոթանալ թղթի հատկություններին, կսովորես թղթի ծավման և վերածավման ձևերը, կտիրապետես օրիգամի պատրաստման տեխնիկային:



**Օրիգամի.** թղթի ծալման և վերածալման շնորհիվ պատրաստում են թռչնային, բուսական, կենդանական և այլ ծավալային նմուշներ:



### **Թղթի ծալման տեխնիկա**

1. Դաս՝ «Ուրախ ավտորուս»
2. Դաս՝ «Թղթե բաժակներ»
3. Դաս՝ «Թիթեռնիկների պար»
4. Դաս՝ «Դպրոցականի հագուստ»

### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու արդեն կիմանաս թղթի ծալման և վերածալման ձևերը և կսովորես օրիգամիի պատրաստման տեխնիկան:

Դաս 1.

## Օրիգամի «Ուրախ ավտորուսը»



Երկարավիզ շնիկն եմ,  
Ուրախ ավտորուսի վարորդն եմ,  
Հենց որ վազքով մեկը գա,  
Կթողնեմ, որ մեզ հետ գա:



1. Ինչո՞ւ է վարորդ շնիկը երկարավիզ:
2. Ինչո՞ւ են փխսիկները ավտորուսի ներքևի հարկում:


Եկեք թղթի ծալումներով շնիկներ և փխսիկներ պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝




↓  
Աշխատանքի կատարման  
հաջորդականությունը


1. Նախապես ստացիր եռանկյունները և գտիր կենտրոնը (նկ.1): Վերևի աջ և ձախ անկյունները կենտրոնից թեքիր դեպի ներքև, ծալիր և հարթեցրո՛ւ (նկ. 2), շրջիր գլխիվայր՝ ականջները դեպի վերև (նկ. 3), նկարիր դիմային գծերը, և ահա թղթե փիսիկը պատրաստ է (նկ. 4):



2. Շնիկ պատրաստելու համար եռանկյան վերևի աջ և ձախ անկյունները թեքիր դեպի ներքև, ծալիր և հարթեցրո՛ւ (նկ.1), իսկ ներքևի եռանկյունաձև անկյունները թեքիր դեպի ներս (նկ. 2): Նկարիր շնիկի դիմային գծերը, և ահա շնիկը պատրաստ է (նկ.3):



→ Ժամանակ լինելու դեպքում կարող ես պատրաստել էքսկուրսիայի ղեկավար շնիկին և վարորդին: Պատրաստիր շնիկներ, փիսիկներ և կիրառիր որևէ հեքիաթում:



- երկարավիզ
- գլխիվայր




Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:



## Դաս 2.

# Օրիգամի «Թղթե բաժակներ»



Քառակուսին ես ծալեցի  
Եվ ստացա եռանկյունի:  
Եռանկյունը՝ մեկ աջ, մեկ ձախ որ ծալեցի,  
Արդեն դարձավ բազմանկյունի:  
Դե ինչ, եկեք ծալենք լեզվակները մենք վերևի,  
Որ ստանանք բաժակները մեր սիրելի:




1. Ինչպիսիք բաժակներ գիտեք:
2. Թղթե բաժակով կարելի է թեյ խմել:


Այսօր կպատրաստենք թղթե բաժակներ:  
Թղթե բաժակներ կարելի է պատրաստել տարբեր գույնի և  
մեծության ամսագրերի, տետրերի ոչ փափուկ թղթերից:

Մեզ անհրաժեշտ է՝





**Աշխատանքի կատարման հաջորդականությունը**

Վերցրո՛ւ քառակուսի թուղթը, ծալի՛ր անկյունագծով, հարթեցրո՛ւ, կտասցվի երկու եռանկյունաձև պատկեր (նկ. 1, 2):



Եռանկյան ներքևի աջ և ձախ գագաթները թեքի՛ր դեպի հանդիպակաց կողմը, ծալի՛ր և հարթեցրո՛ւ հարթիչով (3, 4), իսկ վերևի երկու եռանկյունները թեքի՛ր մեկը՝ ներս, մյուսը՝ դուրս՝ ինչպես նկարում (5): Թղթե՛ բաժակը արդեն պատրաստ է (6):



- հանդիպակաց
- եռանկյունաձև
- անկյունագիծ

1. Բաժակ պատրաստելու համար ինչպիսի՞ն պետք է լինի թուղթը:
2. Շրթ կարելի է օգտագործել թղթե բաժակը:



Պատրաստե՛ք տարբեր մեծության թղթե բաժակներ: Համեմատե՛ք թղթե և ապակե բաժակները: Կիրառե՛ք թղթե բաժակները:

Դաս 3.

Օրիգամի «Թիթեռնիկների պարը»



Թևեր ունի գույնզգույն,  
Թուփ ու ծաղիկ է սիրում,  
Նա՛ ձեզ ամենքիդ ճանաչ՝  
Թռիչքն երկար, կյանքը՝ կարճ:



1. Ինչ գույներով է բնությունը ներկել թիթեռնիկներին:
2. Պատմիր այն մասին, թե առաջին անգամ երբ ես տեսել թիթեռնիկ, և ինչպիսին էր այն:
3. Արդյոք թիթեռնիկների թևիկները համաչամփ են: Եկեք պատրաստենք թիթեռնիկներ:


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Քառակուսի թուղթը գծանշիր անկյունագծով և այդ գծերով ծալիր ներս-դուրս: Հարթեցրո՛ւ հարթիչով (նկ. 1,2,3,): Գտիր արդեն ծաված թղթի կենտրոնը, նշիր և թույլ սեղմիր (նկ. 4,5): Միացրո՛ւ արդեն երկու ծաված թղթի կենտրոնները թղթե ոլորված ժապավենով կամ թելով (նկ. 6,7): Ահա և թիթեռնիկը պատրաստ է:



2. Թղթե թիթեռնիկները կարելի է պատրաստել տարբեր գույնի և մեծության անսագրերի, կոնֆետների, անձեռոցիկի փափուկ թղթիկներից:



3. Տարբեր երկրաչափական ձևերից կարող ես ստանալ թիթեռնիկներ, որոնց թևիկները կլինեն տարբեր:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 4.

## Օրիգամի «Դպրոցականի հագուստ»



1. Ինչ է պատկերված նկարում:
2. Ինչպիսին է Արայի վերնաշապիկը:
3. Ինչպիսին է Անիի զգեստը:
4. Ինչո՞ւ են կոկիկ հագնված:

**Այսօր կպատրաստենք դպրոցականի հագուստ:**

**Եկե՛ք պատրաստենք:**


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Զգեստ պատրաստելու համար քառակուսի թուղթը ծալիր երկտակ, ապա աջ և ձախ կողմերի կետանշված գծերով ծալիր՝ ինչպես նկարում (նկ. 1.2.3.4), հարթեցրո՛ւ: Ուշադիր նայիր տրված (նկ. 5) նկարներին և պատրաստիր ինքնուրույն: Ետ ծալիր փեշը և ուսամասը (նկ. 6,7,8), ահա և զգեստը պատրաստ է: Օգտագործիր հարթիչ:



2. Կապույտ վերնաշապիկ պատրաստելու համար ուշադիր նայիր տրված սխեմային և նկարին, ապա պատրաստիր ինքնուրույն: Օգտագործիր հարթիչ:



Կիրառիր դերային խաղերում:




Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ ՀԱՄԱՉԱՓ ԾԱԼՈՒՄՆԵՐ

## Նպատակ

Այս բաժնում դու կշարունակես ծանոթանալ թղթի հատկություններին, կսովորես թղթի համաչափ ծալման տեխնիկան և կպատրաստես հետաքրքիր նմուշներ:




**Համաչափ** պատկերներ ստանում են թղթի երկտակ ծալման, գծանշման և կտրման շնորհիվ:



### **Թղթի երկտակ ծալման տեխնիկա**

1. Դաս՝ «Թիթեռնիկների զբոսանք»
2. Դաս՝ «Ամանորյա բացիկ»




### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կիմանաս թղթի երկտակ ծալման, գծանշման և կտրման տեխնիկան և կսովորես համաչափ ծալումներով ստանալ հետաքրքիր նմուշներ:



Դաս 1.

«Թիթեռնիկների գրասանք»




Թիթեռները մեր սիրուն,  
Թևիկներով բազմագույն,  
Թռվում են բացատուն,  
Թևիկները ցուցադրում:



1. Ինչ գույներ ունեն թիթեռնիկները:
2. Արդյոք թիթեռնիկի թևիկները համաչափ են:

**Եկեք պատրաստենք:**


Մեզ անհրաժեշտ է՝





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

Քառակուսի թուղթը ծալիր երկտակ այնպես, որ երկու կողմն էլ լինեն հավասարաչափ, ստացիր ծալագիծ (1. 2.): Ծալագիծը հարթեցրո՛ւ հարթիչով, ձևանմուշը տեղադրիր ծալքի գծի վրա, եզրագծի՛ր մատիտով (3. 4.): Մկրատով կտրիր միայն մատիտով եզրագծվածը (5.): Բացի՛ր ծալված թուղթը, և ահա համաչափ թևիկներով թիթեռնիկը պատրաստ է:



Այսպես կարելի է պատրաստել բազմազուն և բազմաձև թիթեռնիկներ:

- 1. Ինչպե՞ս ստացանք համաչափ թևիկներով թիթեռնիկ:
- 2. Մեկ թիթեռնիկի համար քանի՞ քառակուսի է անհրաժեշտ:



- բազմազուն
- բազմաձև
- երկտակ ծալված թուղթ
- համաչափ թևիկներ



Պատրաստի՛ր թիթեռնիկ սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 2.

## «Ամանորյա բացիկ»



Ձնոտան ցրտին, սառնամանիքին  
Սեղանին դրված մի բացիկ տեսա  
Ու շատ զարմացա:  
Իսկ երբ բացեցի բացիկը կանաչ  
Եղևին տեսա և ուրախացա:



1. Ինչ գույն ունեն եղևինները:
2. Արդյոք եղևինները համաչամփ են:

**Եկեք պատրաստենք:**


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Ուղղանկյուն թուղթը ծալիր համաչափ չորս տակ: Հարթեցրո՛ւ հարթիչով: Եռանկյունաձև ձևանմուշը տեղադրիր կենտրոնի ծալքի գծի վրա, եզրագծի՛ր մատիտով: Նշիր եղևնու կտրման հորիզոնական գծերը, կտրիր միայն մատիտով եզրագծվածը՝ ինչպես նկարում: Բացիր ծալված թուղթը, և եղևնին պատրաստ է:



2. Կազմի համար բացիկի հակառակ կողմում ստանձիր նույն չափի ուղղանկյունաձև չորստակ ծալված կանաչ թուղթ: Մոսնձապատիր միայն առաջին և չորրորդ ծալվածքների մակերեսը և վրան դիր եղևնու մակերեսով աշխատանքը:



Պահպանիր պատրաստման հաջորդականությունը՝ ըստ տրված նկարի:



Պատրաստիր բացիկ սեփական մտահղացմամբ



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԿԵՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

## Նպատակ

Այս բաժնում դու կձանթանաս բնական և արհեստական նյութերի տեսակներին, հատկություններին, կտավորես դրանց մշակման ձևերը և կկարողանաս պատկերել հետաքրքիր թեմաներ:



**Բնական և արհեստական** տարբեր նյութերի համադրություն, որոնք ներդաշնակորեն լրացնում են միմյանց մեկ հարթության մեջ և կազմում են կոմպոզիցիոն միասնություն:



Ս. Փարազանով

### **Բնական և արհեստական նյութեր**

1. Դաս՝ «Արագիլների վերադարձը»
2. Դաս՝ «Զարդարված եղևնին»
3. Դաս՝ «Փոքրիկ նվագարարը»



### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կձանոթանաս բնական և արհեստական նյութերի տեսակներին, հատկություններին և կսովորես դրանց մշակման ձևերը, կկարողանաս պատկերել հետաքրքիր թեմաներ:

Դաս 1.

«Արագիլների վերադարձը»



Արագիլը բույն է շինում  
Արարարի ստորոտում:  
Բույն է շինում, ձագ է հանում  
Մեր դպրոցի կտուրում:



1. Որտեղ են ապրում արագիլները:
2. Ու՞ր են մեկնում արագիլները աշնանը:


**Այսօր կպատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝



փորձաթուղթ





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Նախապատրաստիր անհրաժեշտ բոլոր նյութերը և միջոցները: Թափանցիկ որևէ մակերես պատիր պլաստիլինե բարակ շերտով (նկ. 1): Սկզբում հավաքիր արագիլի բույնը: Պլաստիլինե մակերեսի վրա տեղադրիր ձյուղերը կամ խոտերը, թույլ սեղմիր, որպեսզի մխրձվեն պլաստիլինե մակերեսի մեջ (նկ. 2): Արագիլի մարմնի համար սպիտակ բամբակե շրջանիկները մի քիչ ձգիր, ապա տեղադրիր խոտերի վրա (նկ. 3.4): Կտուցը, գլխիկը և վիզը ամրացրո՛ւ ձյուղերով, լուցկու հատիկներով կամ կարմիր թղթով, աչքերը և թևիկները գունավորիր (նկ.5):

1



2



3



4



5



➔ Աշխատիր կոկիկ և անվտանգ:



- Արարապի ստորոտը
- պլաստիլինե մակերես
- բամբակե շրջանիկ
- մխրձվել



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:



Դաս 2.

«Զարդարված եղևնին»



Տեսնք, տեսնք զարդարուն  
Տոնածառը մեր սիրուն:  
Զարդարել ենք մենք բոլորս՝  
Արան, Անին, Արտակն ու ես:  
Դե ինչ, դուք էլ մասնակցեք,  
Սերմ կամ կորիզ, ինչ որ կուզեք,  
Արագ բերեք ու զարդարեք...



1. Տարվա ձր եղանակն է:
2. Ինչ է նկարում պատկերված:
3. Ինչո՞վ է զարդարված եղևնին:

**Եկե՛ք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Ստացիր պլաստիլինե մակերես:



2. Վերցրո՛ւ եղևնու ձյուղերը և հարմար դիրքով ամրացրո՛ւ պլաստիլինե մակերեսի կենտրոնում, թույլ սեղմիր: Զարդարի՛ր նախապես ընտրած սերմերով, կորիզներով, ուլունքներով, բամբակով և այլ միջոցներով: Փոքր մասնիկները մեկիկ-մեկիկ պլաստիլինով ամրացրո՛ւ եղևնու ձյուղերին՝ քո նախընտրած տեղում:

3. Որպես ձյունածածկ մակերես օգտագործիր բամբակի բարակ շերտերը:



Կատարի՛ր համապատասխան ուղղումները և շտկումները: Ահա և պատրաստ է: Աշխատանքը կատարի՛ր կոկիկ և խնամքով:



1. Ինչպիսի՞ն նյութեր օգտագործեցիր:



- մեկիկ-մեկիկ
- ձյունածածկ

2. Ինչո՞ւ օգտագործեցիր այդ նյութերը:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 3.

## «Ուրախ նոտաներ»



1. Ուղքեր են նկարում պատկերված, և որտեղ են նրանք գտնվում:
2. Քանի՞ նոտա են երգում:

**Եկեք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Ստացիր պլաստիլինե մակերես: Վերցրո՛ւ հինգ փայտիկ կամ ձյուղեր, հորիզոնական դիրքով ամրացրո՛ւ պլաստիլինե մակերեսին, թույլ սեղմիր (նկ. 1, 2): Նախապես ընտրած սերմերով, կորիզներով կամ ուլունքներով մեկիկ-մեկիկ ամրացրու «նոտաները» յուրաքանչյուր տողի վրա՝ դո, մի սոլ, սի և տողամիջում՝ ռե, ֆա, լյա (նկ. 3, 4): Նոտաների պոչիկները և «սոլի բանալին» ստացիր փափուկ ոլորված թղթով կամ ձյուղով և տեղադրիր ինչպես նկարում (նկ. 5):


1




2




3



4



5



1. Ո՞ր նոտաներն են տողի (գծի) վրա:
2. Ո՞ր նոտաներն են տողամիջում (գծերի մեջտեղում):
3. Ինչպե՞ս են ամրանում (նոտաները) սերմերը և կորիզները:



Աշխատանքը կատարիր կոկիկ և խնամքով: Կատարիր ուղղումներն ու շտկումները, և այն արդեն պատրաստ է:




Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԴԻԶԱՅՆ

## Նպատակ


Այս բաժնում դու կձանոթանաս կենցաղային առարկաները ձևավորելու եղանակներին և կսովորես դրանց մշակման ձևերը:



ալյումի թուղթ

փայտաշերտ

«**Դիզայն**» բաժնում դու կձանոթանաս նախշերի և զարդանախշերի դերին դեկորատիվ կիրառական արվեստում, կդիտարկես շրջապատում գտնվող և թանգարանային դեկորատիվ նմուշները, կիմանաս դրանց նշանակությունը՝ որպես բոլոր ժամանակների կիրառական իրեր՝ հագուստ, սափորներ, կարպետահյուս իրեր, որոնք զարդանախշված են երկրաչափական, բուսական զարդապատկերներով:



«**Հնագիտական թանգարանում**»

Դաս՝ «Տիկնիկանախշ»

Դաս՝ «Գոգնոցի նախշ»

Դաս՝ «Կարպետի նախշ, զարդանախշ»:


**Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կձանոթանաս կենցաղային առարկաների ձևավորման քայլաչարին, կսովորես և կկարողանաս հետաքրքիր զարդանախշեր պատկերել:



Դաս 1.

## Ապլիկացիա «Տիկնիկանախշ»



\* \* \*

Իմ տատիկը բազմաշնորհ,  
Նախշ է գործում ամեն օր:  
Նախշն էլ ահա, հիմա տես,  
Տիկնիկ լինի նա կարծես:



1. Ինչ նախշ է պատկերված սափորի վրա:
2. Քանի՞ եռանկյուն է օգտագործված տիկնիկանախշի պատկերման համար:

### Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝




«Տիկնիկ վրանի»

«Տիկնիկանախշ»




## Աշխատանքի կատարման հաջորդականությունը


1. Տիկնիկանախշի համար ձևանմուշների օգնությամբ եզրագծի տրված երկրաչափական պատկերները՝ մեկ մեծ, մեկ միջին և երկու փոքր եռանկյուններ, մեկ քառակուսի և երկու քառանկյուն:



2. Կտրահանիր երկրաչափական պատկերները և ստանձիր նկարում տրված հաջորդականությամբ, սկզբում մեծ դետալները, հետո փոքրերը:



3. Ահա արդեն պատրաստ է սափորի վրա պատկերված տիկնիկանախշը:



1. Քանի երկրաչափական պատկեր օգտագործեցիր:
2. Քանի եռանկյունաձև պատկեր օգտագործեցիր:



- տիկնիկանախշ
- քառանկյուն



Համեմատիր քո և ընկերոջդ կատարած տիկնիկանախշը:




Դաս 2.


# Ապլիկացիա «Գոգնոցի նախշ»



Իսկ հիմա ապլիկացիայի տեխնիկայով ստացիր տիկնիկի գոգնոցի նախշը՝ բազմագույն եռանկյունաձև պատկերներով:



Գոգնոցը կապել եմ,  
Ալյուրը մաղել եմ,  
Թոնիքը վառել եմ,  
Գաթան թխել եմ:



1. Ինչո՞ւ է տատիկը գոգնոցով:
2. Քանի՞ մեծ և քանի՞ փոքր եռանկյուն է օգտագործված գոգնոցանախշի պատկերման համար:

## Եկե՛ք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝



- գոգնոցանախշ
- վարդագույն
- մոխրագույն






Վերջին փուլում

Վերջին փուլում



## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Տիկնիկի գոգնոցի նախշի համար ձևանմուշով եզրագծի՛ր և կտրահանի՛ր երեք մեծ և չորս փոքր եռանկյունաձև երկգույն՝ վարդագույն, մոխրագույն պատկերներ:
2. Սոսնձի՛ր գծապատկերին համապատասխան:



Պահպանի՛ր նկարում տրված հաջորդականությունը. սկզբում սոսնձի՛ր մեծ դետալները, հետո՝ փոքրերը: Պատրաստի՛ր նախշեր սեփական մտահղացմամբ:

1. Գոգնոցանախշի համար քանի՞ վարդագույն եռանկյուն օգտագործեցի՛ր:
2. Ընդամենը քանի՞ եռանկյուն օգտագործվեց:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 3.

# Ապլիկացիա «Կարպետի նախշ, զարդանախշ»

Նախշեր և զարդանախշեր հյուսել են մեր մայրիկները և տատիկները՝ գորգի դազգահի վրա: Ահա նկարում տեսնում ենք, թե ինչպես է Անահիտը կարպետ հյուսում:

Ահա և կարպետանախշը:




1. Քանի սպիտակ եռանկյուն կա մեկ կարպետանախշում:
2. Քանի կարմիր եռանկյուն կա մեկ կարպետանախշում:
3. Քանի սպիտակ զուլեր կան մեկ կարպետանախշում:

## Եկեք պատրաստենք:

Մեզ անհրաժեշտ է՝



- կարպետանախշ
- զարդանախշ
- նախշի կրկնություն




ժխտեմքնսիմ

ժխտեմքնսիմ





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը


1. Կարպետի նախշի համար ձևանմուշով եզրագծիր և կտրահանիր 1 կարմիր, 4 սպիտակ եռանկյունաձև պատկերներ, 2 երկար և 2 կարճ սպիտակ քառանկյուններ:



2. Կտրահանված երկրաչափական պատկերները ստանձիր ըստ գծապատկերի, ստացիր կարպետանախշ:



3. Դե ինչ, կարպետանախշն արդեն պատրաստ է: Իսկ եթե նախշը կրկնես, ապա կստանաս զարդանախշ: Այսպես, նախշը կրկնվեց, և ստացվեց զարդանախշ:



1. Զարդանախշի համար քանի՞ կարմիր եռանկյուն օգտագործեցիր:

2. Ընդամենը քանի՞ եռանկյուն օգտագործեցիր:



Պատրաստիր նախշեր սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԱՌՈՂՋ ՄՆՈՒՆԴ ՄՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ


## Նպատակ

Այս բաժնում դու կձանդթանաս սննդի ոլորտում աշխատող մասնագետների աշխատանքին, առողջ սնվելու կանոններին, կտեղեկանաս, թե ինչ դեր և նշանակություն ունի սննդամթերքը մարդու կյանքում:



**Առողջ սնունդ** և որակյալ սննդատեսակներ պատրաստում են սննդի ոլորտում աշխատող մասնագետները:

Շատ կարևոր է, որ դպրոցականները սնվեն ձիշտ և ժամանակին:



1. Դաս՝ «Սպասարկման ոլորտ»
2. Դաս՝ «Մնվելու հիգիենա»
3. Դաս՝ «Առողջ սնունդ»

### **Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կձանդանաս սննդի ոլորտում աշխատող մասնագետների աշխատանքին, կիմանաս սննդամթերքի, առողջ սննդի նշանակության և մակնշման կարևորության մասին:

## Դաս 1.

# ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

Առողջ սննդի պատրաստման համար կգրուցենք սննդի ոլորտում աշխատող մասնագետների՝ խոհարարի, մատուցողի, հացթուխի, վաճառողի աշխատանքային գործունեության և աշխատանքի գործընթացին ներկայացվող պահանջների մասին: Ահա նրանք պատկերված են նկարներում:

Եկեք ծանոթանանք:



1. Ովքեր են պատկերված նկարում, ինչ մասնագիտություն ունեն:
  2. Ինչո՞ւ են սննդի ոլորտում աշխատողները պաշտպանիչ դիմակով:
- ➔ Առանձին խմբերով դիտարկեք նկարները և ներկայացրեք սննդի ոլորտի մասնագետներին՝ խոհարարին, հացթուխին, սպասարկողին:

## «Հացթուխը հաց է թխում»

Ահա հացթուխը ներկայացված է նկարում: Եկե՛ք ծանոթանանք հացթուխի աշխատանքին:



1. Ո՞վ է պատկերված նկարում:
2. Ինչո՞ւ է հացթուխը պաշտպանիչ դիմակով:
3. Ինչպիսի՞ն պետք է լինի հացթուխի հագուստը:

### **Օգնող բառեր, եզրույթներ.**

սանիտարահիգիենիկ կանոններ, պաշտպանիչ դիմակ, թարմ մթերքներ, խոհանոցային գոգնոց, սննդի աշխատակից:



## «Խոհարարը խոհանոցում»

Եկե՛ք զրուցենք խոհարարի և խոհանոցի մասին:



1. Ո՞վ է պատկերված նկարում:
2. Ինչո՞ւ է խոհարարը պաշտպանիչ դիմակով:
3. Ինչպիսի՞ն պետք է լինի խոհարարի հագուստը:
4. Ինչպիսի՞ն պետք է լինի խոհանոցը:

### **Օգնող բառեր, եզրույթներ.**

սանիտարահիգիենիկ կանոններ, թարմ մթերքներ, խոհանոցային գոգնոց, պաշտպանիչ դիմակ, մաքուր խոհանոց, լուսավոր խոհանոց, սննդի աշխատակից:

## «Աշակերտը գնում է որակյալ սնունդ»



1. Ինչո՞ւ է սննդի աշխատակիցը պաշտպանիչ դիմակով:
2. Ինչո՞ւ են մականշավորում սննդամթերքը:
3. Ինչպե՞ս պետք է դիմի աշակերտը վաճառողին:
4. Ինչի՞ համար է ժամկետանց սննդի արկղիկը:

### Օգնող բառեր, եզրույթներ.

պաշտպանիչ դիմակ, մականշավորում, ժամկետանց սննդի արկղիկ, թարմ սնունդ, սպասարկող, վերցրեք, խնդրեմ, տվեք խնդրեմ, շնորհակալություն:



Առանձին խմբերով քննարկեք և ներկայացրեք սննդի ոլորտի սպասարկող մասնագետների դերը սննդամթերքի պատրաստման և վաճառքի գործընթացում:

## «Աշակերտի վարքագիծը դպրոցական բուֆետում»

Անչափ կարևոր է դպրոցականների ճիշտ և ժամանակին սնվելու կազմակերպումը դպրոցական բուֆետում: Ահա նրանք ներկայացված են նկարներում: Եկեք զրուցենք սեղանի շուրջ վարքի կանոնների պահպանման մասին: Մեզ կօգնեն նկարները:



1. Ովքեր են պատկերված նկարում:
2. Որտեղ են նախաճաշում դպրոցականները:
3. Ինչպե՞ս պետք է դիմել վաճառողին:

Նախաճաշում ենք  
երկուսով, որովհետև...



Ինչո՞ւ ոչ ոք չի ուզում  
ինձ հետ նախաճաշել...



- 1. Ինչպե՞ս պետք է նստել սեղանի շուրջը:
- 2. Ինչպե՞ս օգտվել սննդից:
- 3. Ինչպե՞ս ուտել, ինչքա՞ն ուտել:


**Օգնող բառեր, եզրույթներ.**

սեղանի շուրջը հանգիստ նստել, չաղմկել, բարի ախորժակ, ուտել հանգիստ, չշտապելով, ուտելու ընթացքում չխոսել, չաղմկել, ուտել կոկիկ, թարմ սնունդ, անձեռոցիկ, սպասարկող, վերցրեք, խնդրեմ, տվեք, խնդրեմ, շնորհակալություն:



Դիտարկեք թեմատիկ նկարները առանձին խմբերով, ձևակերպեք մտքեր, բեմադրեք և քննարկեք:

Եկեք գրուցենք մրգերի, բանջարեղենի պահպանման մասին: Ձևավորեք խմբեր, դիտարկեք թեմատիկ նկարները առանձին խմբերով, համագործակցեք դասընկերների հետ, քննարկեք: Մեզ կօգնեն նկարները:



1. Ովքեր են խոհանոցում:
2. Անին ինչպե՞ս է օգնում մայրիկին:
3. Ինչպիսի՞ն պետք է լինի խոհանոցի հագուստը:



Մանիտարահիգիենիկ կանոնները սննդամթերքով աշխատելիս.

- Կերակուր պատրաստելուց առաջ լվա՛նք ձեռքերդ:
- Բանջարեղենը լվա՛նք հոսող ջրով:
- Մրգերը լվա՛նք հոսող ջրով:
- Մսվիր լվացած թարմ բանջարեղենով, մրգերով:



1. Ինչո՞ւ է Անին լվանում մրգերը:
2. Ինչո՞ւ է Անին լվանում բանջարեղենը:
3. Ո՞րն է սննդամթերքի նշանակությունը մարդու կյանքում:



Սննդամթերքի պահպանման կանոններն են՝




- բանջարեղենը պահել առանձին տարայի մեջ,
- մրգերը պահել առանձին տարայի մեջ,
- շուտ փչացող մթերքները պահել սառնարանում:

### Օգնող բառեր, եզրույթներ.

հիգիենիկ պայմաններ, խոհանոց, առանձին տարաներ, մաքուր ջուր, խոհանոցային գոգնոց:

### Գործնական աշխատանքներ.

Երեխաների նախընտրությամբ փոքր խմբերով կազմակերպել սննդամթերքի որակի ստուգում, պատրաստեք բուտերբրոդներ:



Համագործակցիր դասընկերներիդ հետ, ձևակերպել մտքեր, ներկայացրե՛ք ձեր կատարած գործնական աշխատանքները և քննարկե՛ք:



# ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

## Նպատակ

Այս բաժնում դու կիմանաս ձեռնարկատիրական գործունեության, ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևորության մասին, կկարողանաս ձևակերպել պարզագույն միտք, գաղափար:



ՍՊՈՐՏ



«Ստեղծարար»

«Ստեղծարար»

Ձեռնարկատիրությունն ուսումնասիրում է մարդկանց ճիշտ կամ սխալ որոշումների ազդեցությունը անձի և շրջակա միջավայրի վրա, և այն, թե ինչ կարելի է անել իրավիճակը բարելավելու նպատակով:

Եկեք իմանանք ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կարևորության մասին: Դիտարկենք, թե ինչ փոփոխություն կարելի է անել որևէ անհրաժեշտ իր ստեղծելու համար, ստեղծել կիրառական իրեր, խաղեր և հիմնավորել տվյալ իրը պատրաստելու անհրաժեշտությունը:

1. Դաս՝ «Գրչաման»
2. Դաս՝ «Հավ մայրիկ», կիրառել «Ով աշխատի, նա կուտի» պաստառի համար
3. Դաս՝ «Չինական գլուխկոտրուկ», որով կարող են հավաքել խճապատկեր, խաղալ խաղեր



### Վերջնարդյունք

Այս բաժնի ավարտին դու կկարողանաս նկարագրել, հիմնավորել, կարևորել ձեռնարկատիրական գործունեությունը, զարգացնել նոր միտք, մտահղացում, նորարարություն: Կնկարագրես ռեսուրսների արդյունավետ օգտագործման ձևերը, կհիմնավորես տվյալ իրը պատրաստելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը:



Դաս 1.

Խճանկար «Գրչաման»



Պատրաստեցինք գրչաման՝  
Գրիչներին շատ հարմար:  
Եկե՛ք նորից պատրաստենք,  
Մեր Արմենին նվիրենք:



1. Ինչի՞ համար է գրչամանը:
2. Ինչպիսի՞ն է գրչամանը:

**Եկե՛ք պատրաստենք:**


Մեզ անհրաժեշտ է՝





## Աշխատանքի կատարման հաջորդականությունը

1. Կտրի՛ր երկու թղթե զուլակ և սոսնձապատի՛ր գունավոր թղթիկներով:



2. Սոսնձի՛ր երկու զուլակները՝ պահպանելով հաջորդականությունը՝ ըստ նկարի: Օգտագործի՛ր փորձաթուղթ:
3. Ամրացրո՛ւ ժապավենը, և գրչամանը արդեն պատրաստ է:



Կարող ես պատրաստել գրչաման սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

Դաս 2.

Ապրիկացիա «Հավ մայրիկ»




Հեզիկ, նագիկ հավիկն են ես,  
Զբոսնում են պարտեզում, տեն:  
Կուտ են ուտում, ձու են ածում,  
Ձագուկներին հետ են շրջում:  
Իսկ պահապան արլորն ահա  
Ծուղրուղն է կանչում հինա:



1. Ինչպիսի երկրաչափական ձև ունեն հավկիթները:
2. Արդյոք հավկիթները ձվաձև են:

**Եկե՛ք պատրաստենք:**

Մեզ անհրաժեշտ է՝





«Ինչպե՞ս կարժանանա»

«Ինչպե՞ս կարժանանա»

↓  
Աշխատանքի կատարման  
հաջորդականությունը

1. Գծանշիր ձևանմուշով և կտրահանիր ձվաձև պատկերներն ու խտտերը:



2. Մտնձիր կտրահանված պատկերները:  
Օգտագործիր փորձաթուղթ: Աշխատիր կոկիկ:



➡ Պատրաստիր ապլիկացիա սեփական մտահղացմամբ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրեք, համեմատեք և քննարկեք:

Դաս 3.

# Ապլիկացիա «Նոյն է իջել» (չինական գլուխկոտրուկ)



\* \* \*



Մեծ Մասիսն է հպարտ կանգնած,  
Դաշտավայրն է ստորոտում:  
Նոյն է իջել այստեղով ցած,  
Արարատի ստորոտում:



Թանգրամը սեղանի ամենահին հայտնի երկրաչափական խաղերից է, որով խաղում են ն' մեծերը, ն' փոքրերը: Այս գլուխկոտրուկը բաղկացած է 7 հարթ երկրաչափական պատկերներից, և դրանցով կարելի է հավաքել կենդանական, թռչնային, մարդկային հետաքրքիր պատկերներ, տառեր, թվեր:



1. Ինչպիսի երկրաչափական ձև ունեն թանգրամները:
2. Քանի՞ եռանկյուն կա մեկ թանգրամում:

### Եկեք պատրաստենք:


Մեզ անհրաժեշտ է՝






## Աշխատանքի կատարման հաջորդականությունը


1. Մատիտով և քանոնով քառակուսի թղթի վրա գծանշիր տրված նկարի հաջորդականությամբ երկրաչափական պատկերներ: Կտրիր և ստացիր երկրաչափական 7 պատկեր:



2. Երկրաչափական յոթ պատկերներով հավաքիր խճապատկերներ, որոնք կարող են լինել միագույն, երկգույն, բազմագույն:



3. Օգտվիր տրված գծապատկերներից: Պատրաստիր խճանկար սեփական մտահղացմամբ:



**Թանգրամներ՝**  
հավաքովի պատկեր,  
գլուխկոտրուկ:



Դասի ավարտին ձեր աշխատանքները ցուցադրե՛ք, համեմատե՛ք և քննարկե՛ք:

# ԿԵՆՑԱՂ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

## Նպատակ

Այս բաժնում կամրապնդվի քո պատկերացումները հիգիենայի, հազուստի, կոշիկի խնամքի և դրանց պահպանման մասին:



**Անձնական հիգիենայի պահպանումը  
նպաստում է առողջության պահպանմանը:**

1. Դաս՝ «Անձնական հիգիենա»:

- Հագուստի և կոշիկի հիգիենա
- Ջրային հիգիենա
- Բնակարանի հիգիենա
- Հանգստի հիգիենա
- Դասապատրաստման հիգիենա

**Վերջնարդյունք**

Այս բաժնի ավարտին դու կհիմնավորես հիգիենայի կանոնների պահպանման, հագուստը, կոշիկները մաքրելու անհրաժեշտությունը:



## Դաս 1.

# ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ



1. Ինչպիսի իրավիճակ է բնակարանում:
2. Ովքեր են պատկերված նկարում:

Եկեք ծանոթանանք դպրոցականի անձնական հիգիենայի, հագուստի, կոշիկի խնամքի, կոկիկ հագնվելու, դասապատրաստման, հանգստի հիգիենայի պայմաններին: Մենք կգրուցենք այն մասին, թե

- ինչպես խնամել հագուստը,
- ինչպես խնամել կոշիկները,
- ինչպես հագնվել ինքնուրույն և կոկիկ,
- ինչպես և որտեղ պետք է դնել հագուստը և կոշիկները:



Ձևավորեք խմբեր, և յուրաքանչյուր խումբ պետք է ստեղծի անձնական հիգիենայի մի հետաքրքիր պատմություն: Կարող եք ներկայացնել դերային խաղեր, ցուցադրել անձնական հիգիենայի պահպանման կանոնները:

## Հագուստի և կոշիկի հիգիենան



- Պահարանում հագուստը դասավորվիր կոկիկ:
- Մաքուր պահիր հագուստը և կոշիկներդ:
- Փոխիր հագուստը՝ ըստ անհրաժեշտության:
- Հագիր տարվա եղանակին համապատասխան հագուստ և կոշիկ:



- Ամեն օր կոշիկներդ մաքրիր խոնավ լաթով՝ թե՛ ներսից, թե՛ դրսից:
- Կոշիկներդ պահպանելու համար օգտագործիր հատուկ քսուք:



Պատմիր խմբին այն մասին, թե ինչպես ես խնամում կոշիկներդ և հագուստդ:

## Ջրային հիգիենա



- Լվա՛ն ատամներդ:
- Լվա՛ն ձեռքերդ դպրոց գնալիս, դպրոցից վերադառնալիս, ուտելուց առաջ, ուտելուց հետո, զբոսանքից հետո, քնելուց առաջ:
- Ընդունի՛ր լոգանք ամեն օր:



Պատմի՛ր խմբին այն մասին, թե ինչպես ես պահպանում ջրային հիգիենան:

## Բնակարանի հիգիենա



- Հավաքի՛ր անկողինդ:
- Մաքրո՛ւր պահիր ննջասենյակդ:
- Քնելուց առաջ օդափոխի՛ր սենյակդ:



Պատմի՛ր խմբին այն մասին, թե ինչպես ես պահպանում ննջասենյակիդ հիգիենան:

## Հանգստի հիգիենա



- Զբոսնալի մաքուր օդում:
- Մասնակցիլ սպորտային, գեղարվեստական պարապմունքներին, խաղերին:



Պատմիլ խմբին այն մասին, թե ինչպես ես պահպանում հանգստի հիգիենան:

## Դասապատրաստման հիգիենա





- Դասապատրաստումդ կազմակերպիլ ինքնուրույն:
- Դասագրքերդ դիլ գրապահարանում:
- Դասավորիլ անհրաժեշտ իրերդ պայուսակում:
- Դասագրքերիդ հետ վարվիլ խնամքով:



Պատմիլ խմբին այն մասին, թե ինչպես ես պահպանում դասապատրաստման հիգիենան:

# ՇՐՋԱՆԱԿՆԵՐ





# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Ս. Փարաջանով 63
- Արարատ 64

# ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

- Ապլիկացիա 4, 30, 32, 34, 36, 38, 40, 42, 44, 46, 48, 48, 72, 74, 92, 93, 94
- անկյունագիծ 51
- բազմագույն 20, 27 37, 38, 59, 95
- բազմաձև 59
- բազմանկյուն 36, 37
- գծագիր 4
- գծանշել 7, 12
- գծապատկեր 4
- դիզայն 70, 71
- եզրագիծ 12, 13
- եռանկյուն 32, 33
- եռանկյունաձև 51
- երկգույն 27, 59, 95
- երկտակ 56, 57, 58, 58, 59, 69
- զարդանախշ 71, 76, 77, 77
- թանգրամ (գլուխկոտրուկ) 89, 94, 94, 95
- խճանկար 4, 19, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, 29, 90, 91
- խոհարար 82
- ծալագիծ 14
- կտրել 14
- համաչափ 4, 56, 58, 58, 59, 61
- հանդիպակաց 51
- հացթուխ 80, 81
- հիգիենա 97, 98, 99, 100, 101
- ձեռնարկատեր 88, 89
- ձևանմուշ 12, 13
- ձվաձև 40, 41, 92, 93



- միագույն 27, 59, 95
- նախշ 71, 72, 72, 73, 74, 75, 76
- շրջան 42, 43
- ուղղանկյուն 38, 39
- սնունդ 78, 79, 80, 83, 85, 86
- սոսնձել 15
- քառակուսի 34, 35
- օրիգամի 4, 46, 48, 50, 51, 52, 54

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

**ապլիկացիա** – դրվագել, ներդրվագել

**բարալիկ** – բարակ

**դիզայն** – գեղեցիկ ձևավորում

**երկտակ** – երկու տակ ծաված

**խճանկար** – ոչ մեծ մասնիկներից հավաքած նկար, պատկեր

**կճղակավոր** – կենդանիների մոտ ոտքերի կոճեր

**համաչափ** – հավասար չափերով պատկեր

**հեռատես** – հեռու տեսնող

**ձեռնարկատեր** – ստեղծող, նախաձեռնող, կազմակերպող,  
ձեռնարկության տեր

**մեկիկ-մեկիկ** – մեկական, հատ- հատ

**պուտպուտիկ** – կետերով, պուտիկներով պատկերված  
մակերես

**օրիգամի** – թուղթը ծալել, վերածալել

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիր, չափորոշիչ, 2023 թ.:
2. **Ավետիսյան Ժ.**, «Տեխնոլոգիա 1-4», Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Ջանգակ», 2009 թ.:
3. **Ավետիսյան Ժ.**, «Աշխատանքային ավրոմ 2-րդ դասարանի համար», Երևան, «Ջանգակ», 2009 թ.:
4. **Ավետիսյան Ժ.**, «Աշխատանքային ավրոմ 2-րդ դասարանի համար», մեթոդական ուղեցույց, Երևան, «Ջանգակ», 2009 թ.:
5. **Ավետիսյան Ժ.**, «Աշխատանքային ավրոմ 1-ին դասարանի համար», ԿԱԻ, 2006 թ.:
6. **Ավետիսյան Ժ.**, «Թղթով և սովարաթղթով աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում», Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2007 թ.:
7. **Ավետիսյան Ժ.**, «Օրիգամիները և մոտորիկայի զարգացումը», Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2008 թ.:
8. **Հովսեփյան Ս.** և ուրիշներ, «Տեխնոլոգիա», 2-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Տիգրան Մեծ», 2019 թ.:
9. **Հովսեփյան Ս.** և ուրիշներ, «Տեխնոլոգիա», 1-4-րդ դաս. Ուսուցչի ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2019 թ.:
10. **Конишева Н. М.**, «Технология» 1 класс, «Умелые руки» изд. Ассоциация карин 2003 г.:
11. **Цирулик Н. А., Проснякова Т. Н.** «Уроки труда» 2-ого класса изд. Самара 2003 г.:
12. **Гусакова М. А.**, «Апликация», изд. Просвещение 1997 г.:
13. **Неменская Л. А.**, «Искусство и ти», Просвещение., 2002 г.:

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ</b> .....6	
Դաս 1. Ի՞նչ գիտես դու արդեն .....	8
Դաս 2. Աշխատատեղի նախապատրաստում .....	10
Դաս 3. Գծանշում.....	12
Դաս 4. Կտրում.....	14
Դաս 5. Սոսնձում .....	16
<b>ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ. ԽՃԱՆԿԱՐ</b> .....	18
Դաս 1. Խճանկար «Տատիկի նկուղում» .....	20
Դաս 2. Խճանկար «Պարուհիներ» .....	22
Դաս 3. Խճանկար «Ընձուղտ» .....	24
Դաս 4. Խճանկար «Ծաղիկները սարերում».....	26
Դաս 5. Խճանկար «Ոսկե ձկնիկ» .....	28
<b>ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ. ԱՊԼԻԿԱՑԻԱ</b> .....	30
Դաս 1. Ապլիկացիա «Նավակ» .....	32
Դաս 2. Ապլիկացիա «Ռոբոտ» .....	34
Դաս 3. Ապլիկացիա «Բազմագույն ցանկապատ» .....	36
Դաս 4. Ապլիկացիա «Դաշնակահար» .....	38
Դաս 5. Ապլիկացիա «Նապաստակներ» .....	40
Դաս 6. Ապլիկացիա «Լուսակիր» .....	42
Դաս 7. Մոդուլային ապլիկացիա. «Անակնկալ բացիկ»	44
<b>ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ. ՕՐԻԳԱՄԻ</b> .....	46
Դաս 1. Օրիգամի «Ուրախ ավտոբուսը» .....	48
Դաս 2. Օրիգամի «Թղթե բաժակներ» .....	50

Դաս 3. Օրիգամի «Թիթեռնիկների պարը» .....	52
Դաս 4. Օրիգամի «Դպրոցականի հագուստ» .....	54
<b>ԹՈՒՂԹ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՈՒՂԹ.</b>	
<b>ՀԱՄԱՉԱՓ ԾԱԼՈՒՄՆԵՐ</b> .....	56
Դաս 1. «Թիթեռնիկների զբոսանք» .....	58
Դաս 2. «Ամանորյա բացիկ» .....	60
<b>ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ</b> .....	62
Դաս 1. «Արագիլների վերադարձը» .....	64
Դաս 2. «Զարդարված եղևնին» .....	66
Դաս 3. «Ուրախ նոտաներ» .....	68
<b>ԴԻՋԱՅՆ</b> .....	70
Դաս 1. Ապլիկացիա «Տիկնիկանախշ» .....	72
Դաս 2. Ապլիկացիա «Գոգնոցի նախշ» .....	74
Դաս 3. Ապլիկացիա «Կարպետի նախշ, զարդանախշ» .....	76
<b>ԱՌՈՂՋ ՄՆՈՒՆԴ, ՄՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ</b> .....	78
Դաս 1. Սպասարկման ոլորտ .....	80
«Հացթուխը հաց է թխում» .....	81
«Խոհարարը խոհանոցում» .....	82
«Աշակերտը գնում է որակյալ սնունդ» .....	83
Դաս 2. Մսվելու հիգիենա .....	84
Դաս 3. Առողջ սնունդ .....	86
<b>ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ</b> .....	88
Դաս 1. Խճանկար «Գրչաման» .....	90
Դաս 2. Ապլիկացիա «Հավ մայրիկ» .....	92

Դաս 3. Այլիկացիա «Նոյն է իջել» ( <i>չինական գլուխկոտրուկ</i> ) .....	94
<b>ԿԵՆՅԱՂ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ</b> .....	96
Դաս 1. Անձնական հիգիենա .....	98
Հազուստի և կոշիկի հիգիենան .....	99
Ջրային հիգիենա.....	100
Բնակարանի հիգիենա.....	100
Հանգստի հիգիենա.....	101
Դասապատրաստման հիգիենա.....	101
<b>ՇՐՋԱՆԱԿՆԵՐ</b> .....	103
<b>ԱՆՎԱՆԱՅԱՆԿ</b> .....	104
<b>ԱՌԱՐԿԱՅԱՅԱՆԿ</b> .....	105
<b>ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ</b> .....	107
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	108

Ժաննա Ավետիսյան

# ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

# 2



Հրատարակչության խմբագիր՝  
Գալյա Հովհաննիսյան-Կիրակոսյան  
Համակարգչային ձևավորումը՝  
Ավարդ Օհանջանյանի  
Գեղամ Մովսիսյանի



**ԷԴԻՑ ՊՐԻՆՏ**  
Երևան, Դ. Մալյան 43  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)

